ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՀԱՅԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ
(ըստ հետազոտության տվյալների)

ԼՈՒՍԻՆԵ ՏԱՆԱՋՅԱՆ

Հայկական համայնքների շարքում իր ծագման բազմաշերտությամբ և մեծությամբ իր ուրույն տեղն է զբաղեցնում Լոս Անջելեսի հայկական համայնքը: Այն առանձնանում է սոցիալական կառուցվածքով և ինտենսիվ քանակական աճով, ինչը պայմանավորված է աշխարհի բոլոր կողմերից՝ Հայաստանից, Միջին Արևելքից, Ամերիկայի տարբեր շրջաններից հայերի ներգաղթով:

Նշված տարածական տեղաշարժերը, ինչպես նաև այլ բազմատեսակ ազդեցությունները (քաղաքական, տնտեսական և այլն) համայնքում առաջ են բերում մի շարք սոցիալական փոփոխություններ: Այս առումով սոցիալական փոփոխությունները դառնում են յուրատեսակ օբյեկտ Սփյուռքի ուսումնասիրության շրջանակներում:

Հոդվածի նպատակն է հետազոտել Լոս Անջելեսի հայերի շրջանում կատարվող սոցիալական փոփոխությունների միտումները՝ նրանց կենսագործունեության սոցիալական համատեքստի փոփոխման պայմաններում:

Բանալի բառեր – սոցիալական տեղաշարժեր, փոփոխություններ, Լոս Անջելեսի հայկական համայնք, սոցիալ-մասնագիտական խմբեր, սոցիալական մոբիլություն:

Հայկական համայնքների շարքում իր ծագման բազմաշերտությամբ և մեծությամբ իր ուրույն տեղն է զբաղեցնում Լոս Անջելեսի հայկական համայնքը: Այն առանձնանում է սոցիալական կառուցվածքով և ինտենսիվ քանակական աճով: Այս քաղաքում բազմաթիվ մշակութային, կրթական, քաղաքական, հայրենակցական ու կրոնական կենտրոններով հայ համայնքն ընդհանուր առմամբ դիսպերս է, սակայն այդ ընդհանուր պատկերի մեջ կան որոշ կոմպակտ խմբեր (Գլենդեյլ, Հոլիվուդ, Ֆրեզնո և այլն), որոնք գտնվում են բավականին բազմազան էթնոմշակութային միջավայրերում[1]: Վերջին 50 տարիների ընթացքում միջինարևելյան քաղաքական անցուդարձերի հետևանքով (Սիրիայի, Լիբանանի ներքին քաղաքական իրավիճակները, լիբանանյան քաղաքացիական պատերազմը, Իրանի Իսլամական հեղափոխությունը և այլն) մեծ հոսքեր են նկատվում դեպի Լոս Անջելես, ինչպես նաև հետխորհրդային

---

[1] **Փիրումյան Ռ., Ավագյան Քն.,** Ամերիկայի Միացյալ Նահանգներ, «Հայ սփյուռք հանրագիտարան», Երևան, 2003, էջ 33-46:

շրջանից սկսած՝ արտագաղթի հսկայական միտում է նկատվում Հայաստանի Հանրապետությունից[2]: Նշված տարածական տեղաշարժերը, ինչպես նաև այլ բազմատեսակ ազդեցությունները (քաղաքական, տնտեսական և այլն) համայնքում առաջ են բերում մի շարք սոցիալական փոփոխություններ: Այս առումով սոցիալական փոփոխությունները դառնում են յուրատեսակ օբյեկտ Սփյուռքի ուսումնասիրության շրջանակներում: Առհասարակ ժամանակակից աշխարհում էթնիկ խմբերի մեծ զանգվածների տեղաշարժերը նպաստում են բազմաէթնիկ հանրույթների ավելացմանը, որոնցում տեղի ունեցող մի շարք գործընթացներ առավելապես պայմանավորված են էթնիկ խմբերի սոցիալական փոփոխություններով և տվյալ միջավայրին ինտեգրման ուղղվածությամբ[3]: Էթնիկ խումբն, իր սոցիալական հատկանիշներով (սոցիալական կառուցվածք, սոցիալական շերտ, տնտեսական գործունեություն և այլն) ներթափանցելով նոր միջավայր, ձեռք է բերում տվյալ հասարակության մեջ որոշակի կարգավիճակ, որը որոշվում է նրա ունեցած ռեսուրսներով[4]: Տվյալ երկրում հասարակական միջավայրի այն հատվածը, որը զբաղեցնում է էթնիկ խումբը, դառնում է նրա զարգացման սկզբնակետը: Սփյուռքում նույն էթնոսի տարբեր խմբեր, կախված ունեցած ռեսուրսներից և ընդունող երկրի միջավայրից, կարող են զբաղեցնել տարբեր կարգավիճակներ և ունենալ տարբեր մասնագիտական կարողություններ, հետևաբար նաև մոբիլության տարբեր ընթացք:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել Լոս Անջելեսի հայերի շրջանում կատարվող սոցիալական փոփոխությունների միտումները՝ ներսերնդային և միջսերնդային կտրվածքով տարբեր ժամանակային պայմաններում, հասկանալ Լոս Անջելեսի հայերի սոցիալական մոբիլության առանձնահատկությունները՝ պայմանավորված և՛ սոցիալական միջավայրով, և՛ էթնիկ խմբին հատուկ ելակետային հատկանիշներով:

Ըստ հետազոտության տվյալների՝ հարցվածների աշխատանքային գործունեության տեսակները բաշխվել են երեք խոշոր սոցիալ-մասնագիտական

---

[2] **Bozorgmeher M., Sabagh G., Der Martirosian C.** Subethnicity: Armenians in Los Angeles, New Brunswich Immigration and entrepreneurship: culture, capital and ethnic networks. (U.S.A.) and London (U.K.), 2004, p. 247-248.

[3] **Ungar M.** Researching culturally diverse pathways to resilience: challenges and solution. Multiethnicity & multiethnic families. U.S., 2010, p. 253.

[4] **Бредникова О., Паченков О**. Этничность “этнической экономики” и социальные сети мигрантов // Экономическая социология. Том 3, N⁰ 2, 2002, стр. 75.

խմբերի[5], որոնց համամասնությունը տրված է աղյուսակ 1-ում.

ա) առավելապես ֆիզիկական աշխատանք կատարողների խումբ,

բ) ծառայողներ կամ սպասարկման ոլորտի աշխատողների խումբ,

գ) առավելապես մտավոր աշխատանք կատարողների խումբ:

Հարկ է նշել, որ առանձնացվել են նաև այնպիսի խմբեր, ինչպիսիք են սովորողները և չաշխատողները:

Ելնելով հոդվածի նպատակից և խնդիրներից՝ հոդվածում ներառվել են Լոս Անջելեսի հայերի շրջանում իրականացված էթնոսոցիոլոգիական հետազոտության տվյալները[6]:

Ըստ փորձագիտական գնահատականների՝ այսօր հայկական համայնքը Լոս Անջելեսում ունի իր հարուստ ներկայությունը, որն առաջին հերթին արտահայտվում է և' ֆիզիկական ներկայությամբ, և' կազմավորված եկեղեցիներով, ազգային, մշակութային կենտրոններով, հայրենակցական միություններով, ոչ շահութաբեր կազմակերպություններով, մամուլով և այլն: Լոս Անջելեսի հայերը մեծամասամբ կենտրոնացած են Հոլլիվուդում և Գլենդեյլում: Համայնքը ընդհանուր առմամբ հին (դասական) Սփյուռքի և նոր ձևավորված Սփյուռքի միասնությունն է: Դասական Սփյուռքը, որի արդյունքն են հայկական դպրոցները, կուսակցությունները, միությունները, հայալեզու թերթերը, Բեյրութի հայերի սերունդներն են հիմնել մինչև 80-ականները: Պարսկահայերի և հայաստանցի հայերի ներգաղթով բավական մեծ փոփոխություններ եղան դպրոցների լեզվական քաղաքականության մեջ: Առկա է նաև նոր Սփյուռքը, որոնք հիմնականում կազմում են Հայաստանից գաղթած հայերը: Վերջիններս

---

[5] **Карапетян, Р. С**. Миграция в городах Армении. Этносоциологическое исследование. Ереван, 2013, стр. 95-96.

[6] Էթնոսոցիոլոգիական հետազոտությունն իրականացվել է «Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» նպատակային ծրագրի շրջանակներում (2011-2015թթ.)՝ քանակական և որակական մեթոդներով (հարցազրույցներ համայնքային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ձևայնացված հարցումներ Լոս Անջելեսի հայ համայնքի անդամների հետ քվոտային ընտրանքով և ձնակույտի մեթոդով, չներգրավված դիտարկում՝ առանց պլանի ձևաչափով): Ծրագիրն իրականացվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի հետազոտությունների բաժնի կողմից (հմմտ. Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները, Հայրենիք-Սփյուռք առնչությունները հայկական մամուլում. Հայաստանի և Սփյուռքի թերթերի կոնտենտ անալիզ, **Կարապետյան Ռ.**, Երևան, 2012, էջ 19):

հիմնականում գալիս են բարեկամների հետ, կազմում են առանձին խմբեր և միայն դպրոցներում են միախառնվում հին Սփյուռքի ներկայացուցիչների երեխաներին: Սակայն հին և նոր Սփյուռքից զատ կան ամերիկահայեր. նրանք, ովքեր 50 տարի այստեղ են բնակվում, արդեն համարվում են ամերիկահայեր՝ տարբերվող մշակույթով: Լոս Անջելեսի ուսումնասիրված հայերի սոցիալ-մասնագիտական կազմն ունի հետևյալ պատկերը:

Աղյուսակ 1. Լոս Անջելեսի հայ համայնքների զբաղվածության պատկերը (% հարցվածներից)

ՍՈՑԻԱԼ-ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԵՐ	% հարցվածներից
Առավելապես մտավոր աշխատանք կատարողներ	45
Ծառայողներ կամ սպասարկման ոլորտի աշխատողներ	12
Առավելապես ֆիզիկական աշխատանք կատարողներ	6
Սովորողներ	15
Չաշխատողներ	22

Որպես հայկական Սփյուռքի բազմատարր համայնք՝ Լոս Անջելեսի հայ համայնքում խմբերի նմանօրինակ բաշխվածությունը բնական է և օրինաչափ: Ինչպես տեսնում ենք, համայնքում գերակա է առավելապես մտավոր աշխատանք կատարողների խումբը, ինչը հավանաբար կապված է կյանքի և առաջընթացի նկատմամբ բավականին բարձր չափանիշների ու պահանջների հետ, որն էլ դառնում է մոբիլ վարքագծի շարժառիթ: Համայնքը դիտարկվում է որպես տարբեր այլ հայկական գաղթօջախներից, բուն ամերիկահայերից և հայաստանցի հայերից կազմված խառնուրդ:

Քանի որ Լոս Անջելեսում հայերի շրջանում միգրացիոն գործընթացները բավականին հարաշարժ են, ապա դիտարկենք, թե ինչպիսի ընթացք են ստացել հայերի կատարած աշխատանքներն անմիջապես այնտեղ տեղափոխվելուց հետո:

«Տեղափոխվելուց անմիջապես հետո ինչո՞վ եք զբաղվել» հարցից պարզ է դարձել, որ սովորողների խումբը ներառում է տեղափոխվողների մեծամասնությունը (69%), ենթադրվում է, որ, կախված միջավայրից, անհրաժեշտ է

եղել սոցիալական ադապտացիայի համար ձեռք բերել որոշակի գիտելիքներ և պատրաստվածություն: Այս խմբի մեջ են մտել թե՛ երիտասարդները, որոնք ուսում են ստացել այնտեղ, թե՛ մեծահասակները, որոնք կարիք են ունեցել իրացնելու լեզվական կամ այլ գիտելիքներ ու հմտություններ՝ հետագա աշխատանքներ նախաձեռնելու համար: Տեղափոխվելուց անմիջապես հետո 17%-ը զբաղվել է առավելապես մտավոր աշխատանքով, այսինքն՝ տվյալ խումբը գնացել է նպատակադրված և արդեն իսկ որոշակի ռեսուրսներով, հետևապես և ավելի արագ է մտել բնականոն կյանքի մեջ: Ապա հավասարապես (7%) տեղափոխվածները զբաղեցրել են ծառայողների և առավելապես ֆիզիկական աշխատանք կատարողների ոլորտները: Համայնքում հարցվածների առաջին և ներկայիս զբաղվածության տեսակները համեմատելիս պարզ է դառնում, որ ամենակայուն խումբը կրկին մտավոր աշխատանք կատարողներն ու ծառայողներն են: Միաժամանակ պետք է նշել, որ նախկինում ֆիզիկական աշխատանքով զբաղվողները ներկայում համալրել են չաշխատողների և սովորողների խմբերը:

Աղյուսակ 2. Լոս Անջելեսի հայ համայնքների զբաղվածության պատկերը տվյալ քաղաք տեղափոխվելուց անմիջապես հետո (% հարցվածներից)

ՍՈՑԻԱԼ-ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԵՐ	% հարցվածներից
Առավելապես մտավոր աշխատանք կատարողներ	17
Ծառայողներ կամ սպասարկման ոլորտի աշխատողներ	7
Առավելապես ֆիզիկական աշխատանք կատարողներ	7
Սովորողներ	69

Այժմ զուգահեռներ տանենք և տեսնենք՝ ինչպիսի փոփոխությունների է ենթարկվել միջսերնդային մոբիլության գործընթացը (տե՛ս գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Լոս Անջելեսի հայերի միջսերնդային մոբիլությունը (% հարցվածներից)



Տեսնում ենք, որ Լոս Անջելեսում սոցիալական վարքագծի ավանդույթի միջսերնդային տրանսմիսիան այնքան էլ չի գործում, մասնավորապես նախկինում առավելապես ֆիզիկական աշխատողների մեծ խումբը (50%) այժմ փոխարինվել է չաշխատողների (22%) և սովորողների (15%) խմբերով: Մտավոր աշխատանքով զբաղվողները գրեթե նույնությամբ պահպանել են նախորդ սերնդի սոցիալական կազմը: Կարելի է ասել, որ կախված իրենց ելքի երկրից՝ Լոս Անջելեսի հայերի տարբեր խմբեր իրենց աշխատանքային ակտիվությունը ցուցաբերում են տարբեր կերպ՝ համապատասխան նախկինում ունեցած փորձի և տվյալ երկրի միջավայրի: Միջավայրին հատուկ պահանջով դրսից տեղափոխված հայերն անմիջապես տեղափոխվելուց հետո զբաղվում են կրթության ձեռքբերմամբ, որն էլ դառնում է սոցիալական շարժունության «գործոն-կատալիզատոր»: Լոս Անջելեսում պայմանները նպաստում են անհատի սոցիալական առաջընթացին՝ նրան տալով լայն հնարավորություններ և միջոցներ՝ ցանկալի կարգավիճակ զբաղեցնելու համար: Սա էլ ապահովում է անհատների սոցիալական մոբիլության տատանումների հավանականությունը՝ ինչպես անկումները, այնպես էլ վերելքները: Ընդհանուր համայնքի կտրվածքով հայերի շրջանում նկատվում է վերընթաց միջսերնդային մոբիլության միտում:

СОЦИАЛЬНЫЕ ИЗМЕНЕНИЯ СРЕДИ АРМЯН ЛОС-АНДЖЕЛЕСА (по данным исследования)

ЛУСИНЕ ТАНАДЖЯН

Армянская община Лос-Анджелеса занимает особое место среди многочисленных армянских общин, отличаясь своей многослойностью происхождения, структурой и численностью, постоянный рост которой, обусловлен иммиграцией армян из Ближнего Востока, разных регионов Америки, Армении, а также многих других стран.

Учитывая, что пространственные передвижения, а также различные воздействия политического, экономического и иного характера вызывают ряд социальных изменений в общине – они представляются важным объектом в исследовании диаспор.

Цель данной статьи заключается в изучении тенденций социальных изменений, происходящих среди армян Лос-Анджелеса, в условиях изменения социального контекста их жизни.

Ключевые слова – социальные перемещения, изменения, армянская община Лос-Анджелеса, социально-профессиональные группы, социальная мобильность.

SOCIAL CHANGES AMONG THE ARMENIANS IN LOS ANGELES (according to research data)

LUSINE TANAJYAN

The Armenian community of Los-Angeles with its dense population, multilayered origin and social structure has a particular status among many other Armenian communities. Armenians from different parts of the world such as Armenia, some Middle East countries, different states and regions of America etc. continue to immigrate to Los-Angeles increasing its Armenian population. These moves as well as other numerous diverse influences (political, economic and other) bring forth some social changes. And these changes are becoming a singular issue within the framework of Diaspora studies.

The objective of this article is to investigate the tendencies of these social modifications under diverse social activity conditions within the Armenian community of Los Angeles.

Key words – Social moves, changes, the Armenian community of Los-Angeles, socio-professional groups, social mobility.